ՀԱՐՑԱԶՐՈՒՅԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔ

Պաշտոն	հարցազրուցավար
Աշխատանքի տեսակը	գործարքային
Վայրը	Երևան և ՀՀ մարզեր
Վերջնաժամկետ	2023 թ., հունվարի 29

«Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան» (ՀՌԿԿ-Հայաստան) հիմնադրամը փնտրում է հարցազրուցավարների՝ **դեմառդեմ հարցման մեթոդով** հանրային կարծիքի ուսումնասիրության նպատակով:

Աշխատանքի նկարագրություն

Հարցազրուցավարները դեմառդեմ հարցումներ են իրականացնում Հայաստանի ողջ տարածքում: Հետազոտական աշխատանքները սովորաբար տևում են 3-4 շաբաթ:

Աշխատանքային պարտականություններ.

- մասնակցել հարցազրուցավարների դասընթացներին,
- իրականացնել դեմառդեմ հարցազրույցներ՝ տրված հրահանգներին համապատասխան,
- մշտական կապի մեջ լինել դաշտային աշխատանքների համակարգողների հետ,
- պատրաստել կարճ հաշվետվություններ աշխատանքների իրականացման մասին:

Պահանջվող որակավորումներ և հմտություններ.

- բարձրագույն կրթություն՝ նախընտրելի է հասարակական գիտությունների ոլորտում (ուսանողները նույնպես կարող են դիմել),
- հայերենի գերազանց իմացություն,
- հարցազրուցավարի աշխատանքային փորձ (ցանկալի է դեմառդեմ հարցման մեթոդով),
- պլանշետային սարքերի հետ աշխատելու կարողություն,
- հաղորդակցության գերազանց հմտություններ,
- սեղմ ժամկետներում արդյունավետ աշխատելու կարողություն,
- թիմային աշխատանքի հմտություններ,
- պատասխանատվություն, ուշադրություն և ճշտապահություն:

Դիմելու կարգը.

Եթե հետաքրքրված եք այս հնարավորությամբ, ուղարկեք Ձեր ինքնակենսագրականը (CV) hr@crrc.am էլ. փոստի հասցեին **մինչև 2023 թ. հունվարի 29-ը**՝ նամակի վերնագրում նշելով «Հարցազրուցավար»:

Արդյունքների մասին կտեղեկացվեն միայն նախնական ընտրությունն անցած դիմորդները:

ՀՌԿԿ-Հայաստանը անկախ և ոչ քաղաքական հետազոտական կենտրոն է, որի նպատակն է խթանել հասարակագիտական հետազոտություններն ու հանրային քաղաքականության վերլուծությունը: Կազմակերպության մասին ավելի մանրամասն՝ http://www.crrc.am/: